ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.10.2020թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Վահագն Ավագյանը, Արման Սարգսյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Դավիթ Սիմոնյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Արման Ափինյանը, Սոխակ Մելքոնյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը, Տիգրան Նազարյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հայկազ Սիմիկյանը, Վահե Կռոյանը, Անահիտ Կարապետյանը, Կարինե Ղուկասյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամմեր՝

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Ռոմիկ Մարգարյանը, Արմեն Ավետյանը, Արման Սիրադեղյանը, Ռոմիկ Մարգարյանը :

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ,ինչպես նաև ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 10.20-ին նիստը հայտարարեց բացված: Նիստին ներկա էին 27 ավագանու անդամներ:

(Վանաձորի ավագանու 2020 թվականի 05.10.2020 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջությամբ առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Մինչ նախապես ներկայացված օրակարգին անցնելը՝ համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանն իր և ավագանու անունից առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել Արցախի ազատամարտում զոհված զինծառայողների հիշատակը:

Նիստը վարողը ներկայացրեց Վանաձոր համայնքի ավագանու և Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի նախաձեռնությամբ մշակված նախագիծը՝ աջակցել «Մենք ենք, մեր սահմանները, բոլորս Արցախի համար» համազգային դրամահավաքին 15 մլն դրամի չափով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախապես ներկայացված որոշման նախագծով օրակարգը:

Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց նախապես ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգ՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1.**ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը